

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԸ

Մայիսի 19-ին, Երևման Ս. Խաչի տոնի օրը, լրացավ Բաքվի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավագերեց, արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանի քահանայության քառասուն տարին։ Այդ օրը Բաքվի հավատացյալ հայ համայնքի համար բացառիկ ուրախության օր էր։ Մատուցվեց հանդիսավոր պատարագ։ Ադրբեջանի և Թուրքեստանի հայոց առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետը իր քարոզում ծանրացավ Տ. Վահան ավագ քահանայի երկարամյա անբասիր, օգտակար գործունեության վրա։ Սուրբ պատարագից հետո հավատացյալները մեկիկ-մեկիկ մոտենում էին համբուրելու հոբելյար քահանայի աջը և շնորհավորում նրան։

Երեկոյան, արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանայի տանը կազմակերպվել էր ճաշկերույթ, որին ներկա էին գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոսը, առաջնորդական տեղապահը, թեմական խորհրդի անդամները, քահանա հայրերը և մասնավոր հրավիրյալներ։

Օրվա հանդիսավորությունից և շնորհավորության անկեղծ խոսքերից հուզված, հոբելյար Տ. Վահան ավագ քահանան իր և իր բարեպաշտ տիրուհու անունից մի կարևոր գումար խոստացավ նվիրել եկեղեցու վերանորոգության համար։

Հոբելյար արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանը մեր եկեղեցական հին սերնդի լավագույն ներկայացուցիչներից է իր եկեղեցական գիտելիքների հարուստ պաշարով, իր փորձառությամբ և երկար տարիների ժրաջան ծառայությամբ։

Տ. Վահան ավագ քահանան ծնվել է Շուշի քաղաքում 1885 թվականի փետրվարի 17-ին։ Ավագ է եղել նրա մկրտության անունը։ Ավարտել է Շուշու հայոց թեմական դպրոցը։ 1917 թվականի մայիսի 19-ին քահանա է ձեռնադրվել Վահան եպիսկոպոսի ձեռամբ Կուսանաց վանքում։

1920 թվականին նա տեղափոխվում է Հյուսիսային Կովկասի Գեորգևսկ քաղաքը, որտեղ և քահանայագործում է շուրջ քսան տարի։ Ապա տեղափոխվում է Վլադիկովկաս, որտեղից և Թբիլիսի, ուր պաշտոնավարում է շուրջ տասը տարի։

Գերագույն Հոգևոր Խորհրդի կարգադրությամբ նա Թբիլիսիից տեղափոխվում է Կիրովաբադ և ապա Բաքու, ուր և մինչև օրս քահանայագործում է որպես հավատարիմ և քաջ հովիվ։

Տ. Վահան ավագ քահանան սիրվել և գնահատվել է որպես ազնիվ և պարտաճանաչ հոգևորական։ Նա իր լավ և բարվոք գործունեության որպես գնահատություն արժանացել է կոչումների և պատիվների։ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, իր կատարած հայրենասիրական աշխատանքների համար, պարգևատրվել է նաև Կովկասի պաշտպանության մեդալով։ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը ևս գնահատել է արժանապատիվ Տ. Հորն ու արժանացրել նրան հայրապետական օրհնության։

Արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանան իր առաջացյալ տարիքին էլ դեռ ժիր է և կայտառ, նվիրված իր սիրած եկեղեցու և ժողովրդի հոգևոր սպասավորության գործին։

Թող Տերը նրան պարգևի անվիշտ ծերություն։ Այս է իր սիրելի հավատացյալ ժողովրդի մաղթանքը նրա քահանայության քառասնամյակի առթիվ։